ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 26 դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Լառա Մովսեսյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Լառա Մովսեսյանը 2016թ. դեկտեմբերի 6-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի՝ սոցիալական և իրավական պետության պահանջին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 23-րդ, 28-րդ, 39-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի դ) մասը»:

Դիմողը ներկայացրել է նաև միջնորդություն՝ իրեն պետական տուրքի վճարումից ազատելու մասին:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթում բացակայում են իրավական սկզբունքները, այն « ... միակողմանիորեն պաշտպանում է Ընկերության և ամբողջովին ոտնահարում ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ շահերը»:

Ըստ դիմողի՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի դ) մասում առկա **«ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել»** եզրույթը մարդու նկատմամբ առաջադրվող անհիմն մեղադրական եզրույթ է, դրանում առհասարակ բացակայում է ապացուցման հիմքեր պարունակող պահանջը, և այդ անհիմն պահանջից բխող՝ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նկատմամբ ֆինանսական անհիմն հետևանք է ստեղծվում:

Դիմողի գնահատմամբ՝ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջը սեփականության իրավունքով պատկանող ավտոտրանսպորտային միջոցը երրորդ (այլ) անձին շահագործման նպատակով հանձնելն օրենքով արգելված չէ, և այդ իրավունքի իրացման արդյունքում եթե ավտոմեքենան տիրապետողն այն օգտագործի այլ նպատակներով՝ սեփականատերը չի կարող տեղյակ լինել դրա մասին: Ուստի «... այս առումով օրինական չէ, որ օրենքով սահմանվի ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջը՝ «ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնող» որակել և նրա վրա ակնհայտ չհիմնավորված ֆինանսական պարտավորության բեռ դնել»:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթը չի համապատասխանում նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 9-րդ հոդվածների 2-րդ մասերին, ինչպես նաև 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերին:

Դիմողը եզրահանգել է, որ բարձրացված հարցն առաջացրել է անհաղթահարելի և անլուծելի բացասական իրավական հետևանքներ:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր առկա չեն, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողներն իրավասու են դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողները սպառել են դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Լառա Մովսեսյանի դիմումի հիման վրա՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «դ» մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Բավարարել դիմողի՝ պետական տուրքի վճարումից իրեն ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

26 դեկտեմբերի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/2-34